

ՄՈՆԹՐԵԱԼԻ

ՏՐԱՊԵՏՈՐԻԱՆԵՑ

ԿՈՒԲԵԼԿԱՆ

Ս. ԵԿԵՆԵՑԻ

EGLISE APOSTOLIQUE ARMENIENNE

5242 PARK AVENUE
MONTREAL, QUEBEC.
Tel. 279-3066

ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH

5 Մարտ, 1970

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Թեմին
եւ Նախագահ Թեմական Ժողովին.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մոնթրէալի Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ տարեկան Միական Ժողովը, որուն կը նախագահէր Առաջնորդական Փոխ. Գերշ. Տ. Վաչէ Սրբազան, գումարուեցաւ Մարտ մէկին, ի ներկայութեան անդամներու մեծամասնութեան:

Օրինական եղող այդ Ժողովին կը մասնակցէին 120 տրատու անդամներ: Միական Խորհուրդի կազմը ամբողջացնելու նպատակաւ, գոց քուէարկութեամբ ընտրուեցան հետեւեալ անդամները. —

Տիարք Յակոբ Զավգավաթեան	91 քուէով,
Սուրէն Թաշեան	75 //
Սահակ Թովալեան	61 ,,
Նուպար Պապիկեան	58 ,,

Նոյնպէս գոց քուէարկութեամբ, Պատգամաւոր ընտրուեցան. —

Տիարք Տոբթ. Արշաւիր Կէօնեան	77 քուէով,
Անդրանիկ Զատրըրեան	62 ,,
Նուպար Սուքիասեան	61 ,,

Ի մօտոյ, Զեղի կուղարկեմ նաեւ 1970 տարւոյ համար ընդունուած նախահաշիւն ու Միական Ժողովի ատենագրութիւնը: Եւ կը խնդրեմ Զեզմէ, Սրբազան Հայր, որ բարեհաճէիք վաւերացնել մեր ընտրութեանց արդիւնքը, վստահ ըլլալով որ մեր նորակազմ Միական Խորհուրդն ու Թեմական Պատգամաւորները, ինչպէս նաեւ միւս Յանձնախումբերը նոր եռանդով գործի լծուելով, մեծապէս պիտի նպաստեն մեր Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան:

Մնամ որդիական Սիրոյ Ողջունիւ,

Երմայր Տ. Գրիգոր
Կիւրեղ ԳԻՆՅ. ԵԹԷՆԿԵԱՆ